

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 127-Ա

10 հունիսի, 2020 թվական

**ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ղեկավարի՝ 2020 թվականի մայիսի 22-ի N 60-Ա հրամանի հիման վրա 2020 թվականի հունիսի 9-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

- 2 օրով արգելել հետևյալ ՀՈԱԿ-ների գործունեության ծավալում՝
 - 1) Երևանի Արաբկիր վարչական շրջանի «Երևանի հ. 25 մանկապարտեզ» ՀՈԱԿ.
 - 2) Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի «Երևանի հ. 90 մանկապարտեզ» ՀՈԱԿ.
 - 3) Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի «Երևանի հ. 94 մանկապարտեզ» ՀՈԱԿ:
- Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ղեկավար Ալեքսանդր Շագաֆյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված ՀՈԱԿ-ներին սույն որոշման մասին տեղեկացումը:
- ՀՈԱԿ-ների գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
- Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 10/06/20 14:52:47 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ

